ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

«27» «05» 2026թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.01.2026թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-26/01-ԱԾ-Լ» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի և Լայմիս ՍՊԸ-ի միջև 2026 թվականի հունվարի 26-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար N «ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-26/01-ԱԾ-Լ» ծածկագրով տնտեսական ապրանքների մատակարարման պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

Լայմիս ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով, 538-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, վերը նշված մատակարարման պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով խնամքի կենտրոնի տնտեսական ապրանքների համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ տնօրենի տեղակալ Խաչատուր Բարսեղյանի 25.05.2026թ. զեկուցագիրը՝

ՈՐՈՇԵՑԻ.

Սույն թվականի մայիսի 27-ից միակողմանի լուծել Լայմիս ՍՊԸ-ի հետ 26.01.2026թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-26/01-ԱԾ-Լ» մատակարարման պայմանագիրը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Ա. ԵՐՎԱՆԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն ք. Վարդենիս, Զորավար Անդրանիկի 4, նրբ 1
(269) 2-27-21
vardenisinternat@mail.ru